

ըստ աստի կը ստովրիմ : Արեւելի և յարգելի
ըլլալը անարգեալ ու ատելի ըլլալէն ա-
ւելի անարժէքի է , ուստի առաքինի
ու քաղաքակիրթ անձի մը սէս կ'սա-
րիմ :

Բարի կ'ըսենք ան ամէն բանին՝ որ
մեր վիճակը կը բացայայտեն . և ընդհա-
կառակն չար ան ամէն բանին՝ որ մեր
վիճակը կը յուսեցնեն . երջանկու-
թիւն կը կոչենք մեծագոյն բարիք ու
նենալը և կարելի եղածին չափ նուազ
չարք :

Բայց երկրիս բարիքն ալ չարիքն
ալ շատ անգամ առերեւոյթ են : Օ իս
ախարհահամ կերակրէ մը կը զըկեմ աւ-
վեալ մը կշտայցնելու համար , ասիկայ
բարիք մըն է ու խղճմանքս ինձի կը
սովորեցնէ զիս բրածիս վրայ գոհ ընե-
լով : Իմ ընկերս ազուր գիրք մը , սի-
բուն մերենայ մը ունի , ու ես կը յա-
փշտակեմ զայն . թէպէտ և ուղիւս
ձեռք ձգելով կարծեմ թէ աղէկ բան
մը ըրի , բայց քիչ մը վերջը խելքը կը
սովորեցնէ թէ գեշ ըրի . վասն զի ու-
րիշին բանը գողցայ , զինքը տհաճե-
ցուցի , և անիրաւութիւն մը ընելով
գեշ մարդ եղայ : Թէ որ բրած չարու-
թիւնս խոստովանիմ , հայրս զիս կը
պատժէ . թէ որ ժխտեմ , բան մը չեմ
քաշեր , բայց սուս խօսիլը գեշ է , վասն
զի ինչ կ'ըլլար աշխարհք՝ թէ որ ամեն-
քը սուս ըսէին : Արեւին ստելով զիս
աւելի կը գեշցնեմ ու չար չարի վրայ
կ'եւեղցնեմ . ուր ընդհակառակն ճրչ-
մարտը զուրցելով , թէ որ նաեւ պա-
տիժ ալ ընդունիմ , ասիկայ կը ծառայէ
ինձի որ ուրիշ անգամ գգու շանամ
անանկ բաներ ընելէն որ չեմ կրնար
խոստովանիլ , ու այսպէսով աւելի բա-
կրնամ ըլլալ :

Արեւին ասով կ'իմանաս որ ճշմա-
րիտ Բարիս անոնք են միայն՝ որ մարդ

բարի աղբիւրով կրնայ ձեռք ձգել , և թէ
երջանիկ-ի-նը առաքինեացն վարձքն է :

Բայց ինչ բանի վրայ կը կայանայ
առաքինի ըլլալը :

Արդար ու Բարեւելը ըլլալուն վրայ :
Ինչ ըսել է արդար ըլլալ :

Ինչ ըսել է . ՉԸՆԵԼ ՌԻՐԵՇՆԵՐՈՒՆ ԸՆ
ԲԱՆՆ , ԻՆՉ ՌԻ ՉԵՄ ՌԵՉԵՐ ԻՆՃԻ ԸՆԵՆ :

Ինչ ըսել է Բարեւելը ըլլալը :

Ինչ ըսել է . ԸՆԵԼ ՌԻՐԵՇՆԵՐՈՒՆ ԸՆ
ԲԱՆՆ , ԻՆՉ ՌԻ Կ՝ՌԵՉԵՄ ՌԻ ԻՆՃԻ ԸՆԵՆ :


Ինչ բան է առաքինի-ի-նը :

Առաքինութիւնը միշտ ուրիշներու ն
օգտակար բաներ ընելու վարժութիւն
մըն է , Աստուծոյ կամայք յարմարեալ
համար :

Թէ որ ասանկ ընեմ՝ ինչ կրնամ
յուսալ :

Սիշտ բաւ ու հանգիստ ապրիլ թէ
ապրիլն ու թէ անգիսն :

Պիսի շարանակ-ի-ն :



Արխանգրո-ի-ն Գանձասարայ վանի
Եկեղեցոյն :

Գանձասարայ վանքը Շուշի քաղա-
քին՝ որ Վարսպաղ ալ կ'ըսուի , հիւ-
սիսային կողմը կ'իջնի , և 12 ժամ հեռի
է քաղաքէն : Սոյն եկեղեցին շինած է
Ծարալ դուրս Հասանը ինչպէս արձա-
նագրին մէջ ալ կը յիշուի : Միքայել
վարդապետ Չամչեան կ'ըսէ՝ թէ թա-
թարաց պատերազմէն խաղաղութի-
ւոյն ազատեալուն համար՝ անոնց հրամանա-
ւոյս եկեղեցին շինեց Աստուծոյ շնոր-
հակալ ընկերոյ (1) . իսկ արձանագիրը
կ'ըսէ՝ թէ իւր հօրը մէկ կտակաւ շե-
նել տուաւ իրր գերեզմանատուն ի-
րենց գերդատանին :

Հասանայ մայրն է Խորիշահը , որ
Արուսաղէմ գալով (2) երէք անգամ ,

(1) Հասար Գ . էջ 211 :
(2) Տես և ի պատմ . Չամբ . հտ . Գ . էջ 183 :

հոս ձգնած է խարաղնադդեան ան-
 ձամբ և հոս վախճանած : Առաջագի
 Նադդասար Արքեպիսկոպոսն Հասան
 Տարախանց և Սեորապոլիսն Հայոց
 Աղուանից 1849 թուոյն 152 համա-
 բով դրած էր հանգուցեալ Արախոս
 Պատրիարքին և կը խնդրէր իւրմէ , որ
 եթէ բարեյիշատակ տիկնաջ Խորիշահի
 կամ տասպանագիրը և կամ ուրիշ տե-
 ղեկու թիւն մի ունի արձանագրու-
 թիւններէ՝ իմացրնէ իրեն : Այց դա-
 բու և աւելի ժամանակաց հնու թիւնը՝
 և կամ լաւ եւս ըսել , մեր նախնեաց
 անհոգութիւնն որք զանց աւած են
 միշտ երեւելի դէպքերը արձանագ-
 րել , շնորհեցին հանգուցեալ Պատրի-
 արքին՝ Սեորապոլիսն հայրենասիրա-
 կան բաղձանքը լեցրնելու :

Ահա տարի արձանագրին օրինակը :

« Յանուն սուրբ Արքարդութեան՝
 Հօր և Որդւոյ և սրբոյ Հոգւոյն . այս
 գիր արձանի է , զոր ես նուազ ծա-
 ոայ Աստուծոյ Տալալ դօրոյ Հասան
 որդի Ախտանկայ՝ թոռն մեծի Հա-
 տանոյ բնակաւոր ինքնակալ բարձր և
 մեծ Արձախական աշխարհի՝ թագաւ-
 ւոր և ի յոգնատահման նահանգի : Օր
 հայրն իմ ի վախճան կենաց ելից իւր
 յատեացս անգարձ կտակի հաստա-
 տեաց ինձ և մօր իմոյ Խորիշահի որ
 էր դուստր մեծ իշխանաց իշխանին
 Սարգսի , զի շինեսցուք եկեղեցիս ի
 գերեզմանատուն հարց մերոց ի Վան-
 ձասար , զոր սկսեալ մեր ՈԳԵ (1216)
 թուին օգնութեամբ բարեբարին Աս-
 տուծոյ , և ի խփել լուսամտին արեւ-
 ւելից՝ մայրն իմ կրօնաւորեալ չոգաւ
 Արուսաղէմ երրորդ անգամ . և ան-
 դէն ի գրան Յարութեան խարաղ-
 նադդեաց ձգնութեամբ , բաղմամեաց
 ժուժկալութեամբ հանգեաւ ի Վրիս-
 տոս լուսոյ վիպութեամբ , և անդէն

պահեցաւ : Իսկ մեր զբաղմամբ կեն-
 ցաղոյս ի մտի եղեալ փոյթ դործոյ ա-
 բարեալ , աւարտուին եղեւ շնորհօք
 ողորմութեան ամենագութ Տեառն
 ՈԶԵ (1238) թուին՝ գօտեւորեալ ա-
 մենագան ձեւօք , պատկերազան յօրի-
 նակերս գմբէթարդ յօրինուածովք
 յօժարութեան կամաց մերոց , որպէս
 տեսանէ Աստուած : Հագացար զպէտս
 միաբանիցս գիւղօրայս՝ Մաչեղ , Հար-
 չանտուս , Բորբքոջն , մէկ լուծ խաչի
 նաձոր , Արաշենիկան գետն այգեստան ,
 Աղնկնի՝ զոր իմ հայրն էր տուեալ ,
 Սահակայն , Փաւրիատոսայն , Արծա-
 թենիսն , որ ես տուի խաչօք , գրաւ-
 նօք , մասամբք , նշխարօք պատուական
 և ձուլածոյ ամենայն սպասուք , և հան-
 դերձ երեւելի զարգիւք ի փառս Վր-
 բիստոսի Աստուծոյ մերոյ : Եւ Աստու-
 ծով ի մեր իշխանութեան եկեղեցիքս
 ազատ են . կամաւ Տէր Արքանոյ ա-
 ռաջնորդի սուրբ ուխտիս և միաբա-
 նիցս գրեցար ժամ՝ զաւագ սեղանն
 բոլոր տարին մեզ , և զայլ ամէն եկե-
 ղեցիքս զատիկն իւր ճրագալուցովն
 իմ հօրն է Ախտանկայ . Աստուա-
 ծածնին դօրն իմ մօրն Խորիշահին ,
 և Յայանութիւնն իւր ճրագալուցովն
 իմ եղբօր Օսթարէի . զաւագ սեղանն ,
 որ իմ է , Աստուածածնէն մինչ ի
 Խաչն իմ պտղուն Հասանայ . Յանա-
 կամունէն մինչ ի Յայանութիւնն Սա-
 քանայ իմ կենակցին . Աթօրէից եւ
 լիցն մինչ ի Առաջաւորն՝ հասարակաց
 անյիշատակաց . Իարեկենդանին նշա-
 բաթն իմ քուէրն Սարինոյ . Աղուհա-
 ջից շաբաթ կիրակէքն իմ եղբօրն Ն-
 վանէի . Օտոկէն մինչ ի Աստուածա-
 ծինն և ի Խաչէն մինչ ի Յինակա-
 մունն ինձ Հասանոյ : () րհնեցաւ եւ
 կեղեցիս ՈԶԹ (1240) թուին , ի հոյ-
 բասկետութեան Տեառն Արքիսի Աղ-
 ուանից Արթուղիկոսի : Հաստատ է

գիրս կամաւն Աստուծոյ . որ հակառակի , ոստին նորա Աստուած է և իւր սուրբքն : Անտնի տօնին մին օր ժամ Յովաստի միակեցին կատարի կամաւ մեծին Հասանայ :

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ք

Ազգային քաղաքք արդէն փութացին ծանուցանել հասարակութեան Ս. Աթոռոյս միաբան Ամառացի Յարութիւն վարդապետի վրայօք եղած ամբաստանութիւնը , որ քանի մի քրքրձաղդեաց աշխարհական միաբանից թեւ թաղրելով փորձ փորձած էր թունաւորել զՎեր . Իսահակ Սրբազան եպիսկոպոսը : Այն դէպքս Ամեն . Սրբազան Պատրիարք Հայրը լսելուն անմիջապէս յանձնաժողով մի կազմեց և յանձնեց անոր որ քննութիւն ըլլայ , և ճշմարտութիւնը յայտնուի : Այն միջոցներուն թէ Յարութիւն վարդապետը և թէ իւր արքանեակները բանտարկուած էին , և քննութիւնները ըմննալէն յետոյ Յարութիւն վարդապետը սուրբ Փրկչայ վանքը խրկուեցաւ , որ քաղաքէս դուրս է , և յատուկ հսկողութեան տակ գրուեցաւ . իսկ իւր դաւակից աշխարհական միաբանները քշուեցան թէ Ս. Աթոռէս և թէ քաղաքէս :

Աւասիկ յանձնաժողովին բրած քննութեանց տեղեկագիրք :

Ամենապատիւ Սրբազան Հայր :

Չեր Սրբազնութիւնը՝ որ ինեւր կայութեան Տնօրէն խորհրդոյ քննիչ Սաննաժողովոյս յանձնած էր Յարութիւն վարդապետի , Սարաչցի դպիր Պօղոսի , Սերաստացի Վէորգի և Բաղչեցի Սուրատին վրայ յայտնուած հարցուփորձը :

Սաննաժողովս 1866 , դեկտեմբեր 6 էն սխեալ մինչեւ 1867 փետրուար 13 , 14 նիստերով կոտորեց իւր սաշտօնը , որոյ արդիւնքը սոյն վերջին տեղեկագրովս կը ներկայացունէ Չեղ աւենագրութենէն քաղերով :

Սաննաժողովոյս պաշտօնը 1866 , դեկտեմբեր 2 երեկոյնի դպիր Պօղոսի սենեկի պատին վրայ փակած պարսաւագրոյն հեղինակը գանել և անոր պարունակութիւնը քննելն էր : Ժաղովս պէտք եղած հետազոտութիւններն ընելով , թղթոյն հեղինակը նոյն իսկ Պօղոսն ըլլալը տու գեց . (տես արձանագրութիւն երես 10 .) և երբ Պօղոսն իւր գրած ամբաստանութիւնները (ուր քանի մը անմեղներ զրպարտուած էին) , իմացաւ որ անկարելի էր հաստատել ինքզինք արդարացունելու նպատակաւ , Սերաստացի Վէորգին զՍահակ Սրբազանը թունաւորելու խորհուրդը յայտնեց , որոյ քննութեան հետեւութիւններն են՝

Ա . Վէորգը Յարութիւն վարդապետին թեւազրութեամբ յանուն Սահակ Սրբազան Հօր և մէկ քանի վարդապետաց բարոյսականին դէմ յանցանքներով լեցուն պարսաւագիր մը փակուցած է կոչնակին վրայ , զոր կարգացած է Անդրիանուպօլսեցի Ստեփան վարդապետը . (արձ . եր . 7 և 15) :

Բ . Յարութիւն վարդապետին խրատով Վէորգն զՍահակ Սրբազանը թունաւորելու փորձ կը փորձէ Սուրատին ձեռօք . որոյ հաւատարմութեամբ չի յաջողիր . ըստ որում Սուրատը երկու անգամ թոյնը Վէորգին ձեռքէն առնելով կը սանի Պօղոսին կը յանձնէ իրը հաւատարիմ սարսաւորի , և տեսնելով որ գործը չի յայտնուիր , երբորդ և չորբորդ անգամին եւս առնելով Վէորգին ձեռքէն , կ'ուզէ թէ Չեր Սրբազնութեան և թէ Սու